ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԳՄԳԳՄ-ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

գ. Գանձակ **«22» «03» 2019թ.**
ժ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Կ. Սիրականյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ժ. Կիրակոսյան, Է. Իսահակյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով՝

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) տեղեկատվությունը և հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝

N 6, 21, 23 չափաբաժիններով՝ <<ԱՏԱՍՏ ՖՈՒԴ>> ՍՊԸ –ին ճանաչել ընտրված մասնակից:

N 15-րդ չափաբաժնով՝ <<Բայազետ-96>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

N 41-րդ չափաբաժնով՝ <<Գավառի հաց>> ԲԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 27.02.2019թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, համաձայն որի <<Արմեն Հովեյան>> ԱՁ-ի հայտը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող 6000(վեց հազար) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ: Ուստի.

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) N 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 22, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 37, 38, 39, 40, 42 և 43 չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<Արմեն Հովեյան>> ԱՁ-ի հայտը մերժել:

բ) քանի որ <<Արմեն Հովեյան>> ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա պատվիրատուն՝ այդ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է

լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ N 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 22, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 37, 38, 39, 40, 42 և 43 չափաբաժիններով՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, գ. Գանձակ, Բաղրամյան 5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Կ. Սիրականյան

Անդամներ՝ _____ Ժ. Կիրակոսյան

_____ Է. Իսահակյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան